

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/1**

**26 հունվարի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Սիրվարդ Խաչերյանի 22.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 155 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Սիրվարդ Խաչերյանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի 155 որոշմամբ պետք է Ա/Ձ Սիրվարդ Խաչերյանից (այսուհետ նաև գանգատաբեր) գանձվի 379.302 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունը կազմում է 371.367 դրամ, իսկ եկամտային հարկի գծով՝ 7.935 դրամ:

Գանգատաբերը գտնում է, որ նշված գումարների մասով պետք է կատարվի վերահաշվարկ հետևյալ պատճառաբանությամբ:

Որպես անհատ ձեռնարկատեր գանգատաբերը պետական ռեսուրսներում գրանցվել է 08.12.1995 թ-ին, սակայն գործունեությունն իրականացրել է շատ կարճ ժամանակահատվածում: Համաձայն 19.12.2012 թ-ին ընդունված «Հարկային և պատրադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի պետք է գանգատաբերն ազատվեր նշված պարտավորությունների կատարումից (քարտում երևում են դրանց առաջացման հիմքերն ու ժամանակը):

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է կատարել պարտավորությունների վերահաշվարկ, ինչպես նաև կարճել սկսված վարչական վարույթը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Սիրվարդ Խաչերյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 27.08.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 379.302 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության գծով՝ 371.367 դրամ, եկամտահարկի գծով՝ 7.935 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 27.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 155 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Սիրվարդ Խաչերյանից 379.302 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ

հողվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Սիրվարդ Խաչերյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել 2009-2012թ.թ. համար նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդմանը, որ Ա/Ձ Սիրվարդ Խաչերյանի նկատմամբ չեն կիրառվել 19.12.2012 թ-ի «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները, ապա նշված պնդումը հիմնավոր չէ: Մասնավորապես, Մաշտոցի ՀՏ ներկայացուցիչը նշեց, որ Ա/Ձ Սիրվարդ Խաչերյանի նկատմամբ կիրառվել են 19.12.2012 թ-ի «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները, որի արդյունքում մինչև 2009թ. ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունները՝ ընդհանուր գումարով 527.003 դրամ, նվազեցվել են:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Որոշման մեջ տեղ է գտել վրիպակ, այն է՝ Որոշման մեջ նշված 7.935 դրամի պարտավորությունը ոչ թե եկամտահարկի, այլ հաստատագրված վճարի գծով է:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 155 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ